մեր մի՛ երևեսցի գեղեցկութիւն նորայ մինչ ո՛չ դացի սահման յօրինաց, երկայնամիտ լեր ընթերցող, ոսկին քոյ ո՛չ ունիս սահման յօրինելոյ աշտանակս գեղեցիկս կերպարանօք և փայլածու կացցէ նա՛ և մնասցէ վասն քոյ ըստ նմանութեան իբր խոփի երկաթի, որում վարես դու յերկիր, և ամենայն պատուական բան 'ի միջի քոյ գուցէ այսպէս զինչ թուի 'ի միտս քոյ, մի՛ թէ Արարիչ Աստուածն մեր Օրաւուր առնէ ստեղնագործութիւն և կամ մինն ստեղծեաց իմաստուն և միւսն տգէտ, քաւ լիցի, բնութիւն մարդոյ 'ի յերեսս երկրի բնականապէս հաւասար ծնանի, այլ ով ոք որ հանդիպեսցի սնընդեան ուսանի արհեստս ընդ վարպետէ իմաստնոյ տայ նմա ուսումն և յօրինէ բնութիւն նորայ իմաստուն և ծանօթացուցանելով ճանաչել նմայ բարին, չարն, արժանն և անարժանն, և 'ի վերայ երկրի կազմէ նմայ իբր աշտանակ պանծալի մի և նոյն բնութիւնն որ ես պահեցի անկարգութեամբ և անօրէնութեամբ որպէս ոսկի խոր թաղեալ մէջ ըստ տեսակս երկաթի, այլ անդրադարձն պատճառն ամենայն բարութեան կարգադրութիւն բարի՝ այն որ տեսանելոց ես դու ընդ փոքրիկ շարս կանոնիս 'ի գրքուկս շարեալ երկայնամտութեամբ ամենայն հատոր նորայ ընթեռնուլով, և 'ի պատճառն փորձառութեան սորայ նախ դիր այս ամենայն հատոր յօրէնս 'ի